# ԿՈՆՎԵՆՑԻԱ

## ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

## ԵՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեհաստանի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ղեկավարվելով երկու Պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկական ու մշակութային համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու մտադրությամբ, եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու, հարկումից խուսափումը կանխելու նպատակով, որոշեցին կնքել սույն Կոնվենցիան և պայմանավորվեցին հետևյալի մասին.

## ԳԼՈՒԽ I

## ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

### ՀՈԴՎԱԾ 1

### ԱՆՁԻՆՔ, ՈՐՈՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

### ՀՈԴՎԱԾ 2

### ԸՆԴԳՐԿՎՈՂ ՀԱՐԿԵՐԸ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետության կամ նրա վարչա-տարածքային ստորաբաժանումների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված՝ եկամուտների և գույքի հարկերի նկատմամբ, անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտների և գույքի հարկեր են համարվում ամբողջ եկամտի, ամբողջ գույքի, կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր հարկերը, ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած հավելաճի, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքի բարձրացման նկատմամբ հարկերը:

3. Կոնվենցիան կիրառվում է, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

a) Լեհաստանի դեպքում.
   i) ընկերություններից եկամտահարկ,

   ii) ֆիզիկական անձանց եկամտահարկ,

   (հետագայում՝ հիշատակվող որպես «լեհական հարկ»):

b) Հայաստանի դեպքում.
   i) շահութահարկ,
   ii) եկամտահարկ,

(հետագայում՝ հիշատակվող որպես «հայկական հարկ»).

4. Սույն Կոնվենցիան կիրառվում է նաև սույն Հոդվածի 1 կետի դրույթների համաձայն դասակարգված հարկերին նույնական կամ ըստ էության համանման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները խելամիտ ժամկետներում ծանուցում են միմյանց իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված որևէ նշանակալի փոփոխությունների մասին:

## ԳԼՈՒԽ II

## ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

### ՀՈԴՎԱԾ 3

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում.

a) «Պայմանավորվող Պետություն» տերմինը ենթատեքստից կախված նշանակում է Լեհաստան կամ Հայաստան,

b) «Լեհաստան» տերմինը նշանակում է Լեհաստանի Հանրապետություն և աշխարհագրական իմաստով օգտագործվելիս նշանակում է տարածքը, ներառյալ տարածքային ծովը և դրանից վեր բացառիկ տնտեսական գոտին, որի նկատմամբ իր ներքին և միջազգային իրավունքին համաձայն Լեհաստանի Հանրապետությունը իրականացնում է ծովային հատակի, նրա ստորին շերտի և դրանց բնական պաշարների հետախուզման և շահագործման իրավունքներ,

c) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և աշխարհագրական իմաստով օգտագործվելիս նշանակում է տարածքը, որի նկատմամբ իր ներքին օրենսդրությանը և միջազգային իրավունքին համաձայն Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավասություն,

d) «Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են համապատասխանաբար Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

e) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձը, ընկերությունը և անձանց ցանկացած այլ միավորումը,

f) «ընկերություն» տերմինը նշանակում է ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

g) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է ծովային կամ գետային նավով կամ օդանավով, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցով իրականացվող ցանկացած փոխադրում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի փոխադրումն իրականացվում է բացառապես մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող վայրերի միջև.

h) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

(i) Լեհաստանի դեպքում՝ ֆինանսների նախարարը կամ նրա լիազորած ներկայացուցիչը

(ii) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների նախարարը և պետական եկամուտների նախարարը կամ նրանց լիազորած ներկայացուցիչը,

i) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

(i) Պայմանավորվող Պետության քաղաքացիությունն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

(ii) ցանկացած իրավաբանական անձ, որը Պայմանավորվող Պետության գործող օրենսդրության հիման վրա ստացել է այդ կարգավիճակը:

2. Պայմանավորվող Պետության կողմից Կոնվենցիան կիրառելիս ցանկացած պահի դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նրան այդ պահին այդ Պետության օրենսդրությամբ տրված է այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան: Այդ Պետության գործող համապատասխան հարկային օրենքներով սահմանված ցանկացած տերմինի նշանակությունը գերակայում է այդ Պետության այլ օրենքներով այդ տերմինի համար սահմանված նշանակության նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 4

## ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող Պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է ցանկացած անձ, որն այդ Պետության օրենսդրության համաձայն այնտեղ ենթակա է հարկման իր մշտական բնակության, գրանցման վայրի, պաշտոնական բնակության, ղեկավարման վայրի կամ որևէ այլ համանման չափանիշի հիման վրա, և ներառում է նաև այդ Պետությունը և նրա որևէ քաղաքական ստորաբաժանում կամ տեղական ինքնակառավարման մարմին:

2. Երբ 1 կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը կորոշվի հետևյալ կերպ.

a) նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա ունի իր մշտական կացարանը: Եթե նա ունի իր մշտական կացարանն երկու Պետություններում, նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),

b) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի իր կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում չունի իր մշտական կացարանը, նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա սովորաբար բնակվում է,

c) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում, կամ նրանցից և ոչ մեկում, նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որի ազգային անձն է հանդիսանում,

d) եթե նա երկու Պետությունների ազգային անձն է հանդիսանում, կամ և ոչ մեկինը չէ, Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները հարցը կլուծեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Երբ 1 կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձից տարբերվող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների

ռեզիդենտ, նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որի օրենքների համաձայն գրանցված է:

## ՀՈԴՎԱԾ 5

## ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է գործունեության կայուն վայր, որի միջոցով Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ամբողջությամբ կամ մասամբ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում:

2. «Մշտական հաստատություն» տերմինը, հատկապես, ներառում է.

a) ղեկավարման վայր,
b) մասնաճյուղ,
c) գրասենյակ,
d) գործարան,
e) արաղրամաս, և
f) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների հետախուզման, արդյունահանման կամ շահագործման ցանկացած այլ վայր:

3.

a) Շինարարական հրապարակը, կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը համարվում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ այդպիսի հրապարակի, ծրագրի կամ գործունեության տևողությունը գերազանցում է տասներկու ամիսը,

b) «Մշտական հաստատություն» տերմինը ներառում է նաև ծառայությունների մատուցումը, ներառյալ խորհրդատվական ծառայությունները՝ այդ նպատակով ձեռնարկության վարձած ծառայողների կամ այդ այլ անձնակազմի միջոցով, եթե այդ բնույթի գործունեությունը (միևնույն կամ փոխկապակցված ծրագրեր) այդ երկրում ցանկացած տասներկուամսյա ժամանակաշրջանում շարունակվում է ընդհանուր առմամբ վեց ամսից ավելի ժամանակաշրջան կամ ժամանակաշրջաններ:

4. Չնայած սույն Հոդվածի նախորդ կետերի դրույթներին, Պայմանավորվող Պետության ձեռնարկության հետևյալ գործունեությունները չեն դիտարկվում որպես մյուս Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատության միջոցով իրականացվող.

a) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների բացառապես պահպանման կամ մինչև այդպիսի պահպանումը կնքված պայմանագրերի համաձայն առաքման, կամ ցուցադրման նպատակով,

b) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների օգտագործումը բացառապես պահպանման կամ ցուցադրման նպատակով,

c) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների օգտագործումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

d) գործունեության կայուն վայրի օգտագործումը ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

e) գործունեության կայուն վայրի օգտագործումը ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

f) գործունության կայուն վայրի օգտագործումը բացառապես a) - e) ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար:

5. Չնայած 1 և 2 կետերի դրույթներին, երբ անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից (որին վերաբերում է 7 կետը) տարբերվող անձը գործում է Պայմանավորվող Պետությունում մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկությունը համարվում է առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող ցանկացած գործունեության նկատմամբ, որն այդ անձն իրականացնում է այդ ձեռնարկության համար, եթե այդպիսի անձը.

a) ունի և սովորաբար օգտագործում է այդ Պետությունում այդ ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասությունը, բացառությամբ եթե այդ անձի գործունեությունը չի սահմանափակվում 4 կետում նշվածով, որը եթե անգամ և իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ կետի դրույթների համաձայն այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատություն, կամ

b) չունի այդպիսի իրավասություն, սակայն սովորաբար առաջինը հիշատակված Պետությունում օգտագործում է ապրանքների կամ արտադրանք պահեստ, որտեղից ձեռնարկության անունից պարբերաբար առաքում է ապրանքներ կամ արտադրանք:

6. Անկախ սույն Հոդվածի նախորդ դրույթներից, եթե Պայմանավորվող Պետության ապահովագրական ձեռնարկությունը, բացառությամբ վերաապահովագրման դեպքերի, կհամարվի մյուս Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն ունեցող, եթե այդ մյուս Պայմանավորվող Պետությունում այն անկախ գործակալի կարգավիճակ ունեցող անձից (որին վերաբերում է 7 կետը) տարբերվող անձի միջոցով ընդունում է ապահովագրական վճարներ կամ ապահովագրում է այնտեղ տեղակայված ռիսկերից:

7. Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող մյուս Պայմանավորվող Պետությունում միայն այն պատճառով, որ այդ մյուս Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է

իրականացնում բրոքերի, կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած գործակալի միջոցով, պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում: Սակայն, սույն կետի իմաստով այդպիսի անձը չի դիտարկվի որպես անկախ կարգավիճակով գործակալ, եթե այդպիսի անձի գործունեությունն ամբողջությամբ կամ համարյա ամբողջությամբ իրականացվում է այդ ձեռնարկության անունից:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից, կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին որևէ ընկերության չի դարձնում մյուս ընկերության մշտական հաստատությունը:

## ԳԼՈՒԽ III

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄ

### ՀՈԴՎԱԾ 6

### ԵԿԱՄՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինը ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող Պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Ծովային, գետային նավերը և օդանավերը, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1 կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. Երբ ընկերության բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների սեփականության իրավունքը այդպիսի բաժնետոմսերի սեփականատիրոջը իրավունք է տալիս օգտագործել ընկերությանը պատկանող անշարժ գույքը, ապա ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրումից կամ այդպիսի իրավունքի ցանկացած այլ ձևի օգտագործումից ստացվող եկամուտը կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ անշարժ գույքը գտնվում է:

5. 1 և 3 կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

### ՀՈԴՎԱԾ 7

### ՇԱՀՈՒՅԹ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունից շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող Պետությունում չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը վերը նշված ձևով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է.

a) այդ մշտական հաստատությանը,

b) այդ մյուս Պետությունում այնպիսի ապրանքների և արտադրանքի վաճառքին, որոնք նույնն են կամ համանման են մշտական հաստատության միջոցով վաճառվողներին,

c) այդ մյուս Պետությունում իրականացվող այնպիսի ձեռնարկատիրական գործունեությանը, որը նույնն է կամ համանման է մշտական հաստատության միջոցով իրականացվող գործունեությանը:

2. Հաշվի առնելով 3 կետի դրույթները, երբ Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, յուրաքանչյուր Պայմանավորվող Պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն ձեռնարկատիրական շահույթը, որն այն կարող էր ստանալ՝ նույն կամ համանման պայմաններում իրականացնելով նույն կամ համանման գործունեությունը և լինելով ինքնուրույն ու առանձին ձեռնարկություն և գործելով միանգամայն անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության ձեռնարկատիրական գործունեության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցնում համարել մշտական հաստատության նպատակների համար կրած փաստացի ծախսերը, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը ինչպես այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, այնպես էլ այլ վայրերում: Սակայն, չի թույլատրվի նվազեցնել այն գումարները, որոնք մշտական հաստատության կողմից վճարված են (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) ձեռնարկությանը՝ պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիների, հոնորարների կամ այլ համանման վճարումների տեսքով, մատուցված ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի տեսքով, կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության դեպքի՝ մշտական հաստատությանը տրամադրված փոխառության դիմաց տոկոսների տեսքով:

4. Ոչ մի շահույթ չի վերագրվի մշտական հաստատությանը այդ մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքներ կամ արտադրանք գնելու պատճառով:

5. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ամեն տարի որոշվում է միևնույն եղանակով, եթե չկա այն փոփոխելու համար հիմնավոր և բավարար պատճառ:

6. Եթե Պայմանավորվող Պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության ամբողջ շահույթն իր տարբեր ստորաբաժանումների միջև բաշխելու հիման վրա, 2 կետի ոչ մի դրույթ որևէ կերպ չի արգելի այդ Պայմանավորվող Պետությանը ընդունված բաշխման եղանակի հիման վրա հարկման ենթակա շահույթը որոշելիս: Այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն Հոդվածում ընդգրկված սկզբունքներին:

7. Երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնց մասին առանձին նշվում է սույն Կոնվենցիայի այլ Հոդվածներում, ապա սույն Հոդվածի դրույթները չեն ազդում այդ Հոդվածների դրույթների վրա:

## ՀՈԴՎԱԾ 8

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ

1. Միջազգային փոխադրումներում ծովային, գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից Պայմանավորվող Պետության ձեռնարկության ստացած շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

2. Կոնտեյներների և դրանց վերաբերող սարքավորումների ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրումից կամ ցանկացած այլ ձևի շահագործումից Պայմանավորվող Պետության ձեռնարկության ստացած շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

3. 1 և 2 կետերի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից առաջացած շահույթի նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 9

## ԶՈՒԳՈՐԴՎԱԾ (ԱՍՈՑԱՑՎԱԾ) ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երբ.

a) Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

b) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող Պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրական կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծված կամ սահմանված են պայմաններ, որոնք տարբերվում են նրանցից, որոնք կստեղծվեին երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Երբ Պայմանավորվող Պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկությունները բնորոշող փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդ շահույթի առնչությամբ այնտեղ գանձված հարկի

գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Կոնվենցիայի այլ դրույթները և Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց հետ:

## ՀՈԴՎԱԾ 10

## ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն, այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքներին համաձայն, բայց այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը, եթե ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերն է:

Այս կետը չի ազդում ընկերության հարկմանը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործելիս նշանակում է ցանկացած բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից եկամուտը, ինչպես նաև այլ կորպորատիվ իրավունքներից եկամուտը, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից ստացած եկամուտը՝ համաձայն այն Պետության օրենդրության, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1 և 2 կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում՝ այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի առնչությամբ վճարվում են շահաբաժինները, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ:

Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են սույն Կոնվենցիայի 7 Հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14 Հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

5. Երբ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող Պետությունից, այդ մյուս Պետությունը չի կարող սահմանել որևէ հարկ ընկերության կողմից վճարված շահաբաժինների նկատմամբ, բացառությամբ երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրականում կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ

կայուն բազայի հետ, և չի կարող հարկման ենթարկել ընկերության չբաշխված շահույթը համապատասխան հարկատեսակով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

## ՀՈԴՎԱԾ 11

## ՏՈԿՈՄՆԵՐ

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն, այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ Պետության օրենքներին համաձայն, բայց այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը, եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է:

3. «Տոկոսներ» տերմինը սույն Կոնվենցիայում օգտագործելիս նշանակում է ցանկացած տեսակի պարտապահանջներից եկամուտը՝ անկախ հիպոտեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, մասնավորապես, կառավարական արժեթղթերից եկամուտը և պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից եկամուտը, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները: Սույն Կոնվենցիայի նպատակով ժամկետանց վճարման պատճառով տուգանքների և տույժերի գանձումները որպես տոկոսներ չեն դիտարկվում:

4. 1 և 2 կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում՝ այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, իրականում կապված է 7 Հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) 1 կետում հիշատակված սահմանումների հետ: Այդ դեպքերում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7 Հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14 Հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

5. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողն ինքն այդ Պետությունն է, այդ Պետության վարչատարածքային ստորաբաժանումը, տեղական ինքնակառավարման մարմինը կամ ռեզիդենտը: Սակայն, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն կամ կայուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ կայուն

բազան, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

6. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ, կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով, պարտապահանջին վերաբերող վճարված տոկոսների գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն Հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրի օրենքների համաձայն, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

## ՀՈԴՎԱԾ 12

## ՌՈՅԱԼԹԻ

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ այն առաջանում է՝ այդ Պետության օրենքներին համաձայն, սակայն այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 10 տոկոսը, եթե ստացողը ռոյալթիի փաստացի սեփականատերն է:

3. «Ռոյալթի» տերմինը սույն Կոնվենցիայում օգտագործելիս նշանակում է ցանկացած տեսակի վճարում, որը ստացվում է որպես փոխհատուցում՝ գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների, կամ ռադիոյով կամ հեռուստացույցով հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման, կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրական կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1 և 2 կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ՝ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին՝ և իրավունքը կամ գույքը, որոնց առնչությամբ վճարվում է ռոյալթին իրականում կապված է 7 Հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) 1 կետում հիշատակված սահմանումների հետ: Այդ դեպքերում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7 Հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14 Հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողն ինքն այդ Պետությունն է, այդ Պետության վարչատարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանության մարմինը կամ ռեզիդենտը: Սակայն, երբ ռոյալթին վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն կամ կայուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը և այդպիսի ռոյալթի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ կայուն բազան, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

6. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ, կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով, օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն Հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրի օրենքների համաձայն, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

## ՀՈԴՎԱԾ 13

## ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՑ

1. 6 Հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ստացված արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մասը կազմող շարժական գույքի, կամ մյուս Պայմանավորվող Պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ունեցած կայուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի կայուն բազայի օտարումից առաջացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում ծովային, գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից, կամ այդպիսի ծովային կամ գետային նավերին, օդանավերին, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցներին վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից այլ ընկերության բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների օտարումից ստացվող գույքի արժեքի հավելաճը կարող է հարկվել մյուս Պետությունում, եթե այդ

ընկերության ակտիվները հիմնականում կազմված են այդ մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից:

5. 1, 2, 3 և 4 կետերում նշված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է օտարող անձը:

## ՀՈԴՎԱԾ 14

## ԱՆԿԱԽ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մասնագիտական ծառայություններից կամ անկախ բնույթի այլ գործունեությունից Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե նա մյուս Պայմանավորվող Պետությունում իր գործունեությունն իրականացնելու համար պարբերաբար իր տրամադրության տակ չունի կայուն բազա: Եթե նա ունի այդպիսի կայուն բազա, այդ եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում, սակայն միայն այն չափով, որը վերագրելի է այդ կայուն բազային:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, հատկապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների, աուդիտորների և հաշվապահների անկախ գործունեությունը:

## ՀՈԴՎԱԾ 15

## ԿԱԽՅԱԼ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաշվի առնելով 16 (Տնօրենների հոնորարներ և ղեկավար պաշտոնյաների վարձատրություններ), 18 (Կենսաթոշակներ) և 19 (Պետական ծառայություններ) Հոդվածների դրույթները, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող Պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1 կետի դրույթներին, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե.

a) ստացողը դիտարկվող ֆինանսական տարում գտնվում է մյուս Պետությունում՝ ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետում կամ ժամկետներում, և

b) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

c) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

3. Չնայած սույն Հոդվածի նախորդ դրույթներին, միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ստացված վարձատրությունը կարող է հարկվել միայն այդ Պետությունում:

## ՀՈԴՎԱԾ 16

## ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի կամ այլ համանման մարմնի անդամ՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնարարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

## ՀՈԴՎԱԾ 17

## ԱՐՏԻՍՏՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Չնայած 14 (Անկախ անձնական ծառայություններ) և 15 (Կախյալ անձնական ծառայություններ) Հոդվածների դրույթներին, մյուս Պայմանավորվող Պետությունում իր իրականացրած անձնական գործունեությունից որպես արվեստի գործիչ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած եկամուտը՝ ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Երբ արվեստի գործչի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած սույն Կոնվենցիայի 7 (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից), 14 (Անկախ անձնական ծառայություններ) և 15 (Կախյալ անձնական ծառայություններ) Հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի աշխատողի կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած 1 և 2 կետի դրույթներին, 1 կետում հիշատակված գործունեության արդյունքում արվեստի աշխատողի կամ մարզիկի կողմից ստացված եկամուտը ազատվում է հարկից այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ գործունեությունն իրականացվում է, եթե այդպիսի գործունեությունը իրականավցվում է Պայմանավորվող Պետությունների Կառավարությունների միջև համաձայնեցված մշակութային կամ սպորտային փոխանակման շրջանակներում և չի իրականացվում շահույթ ստանալու նպատակով:

## ՀՈԴՎԱԾ 18

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտին նախկին վարձու աշխատանքի առնչությամբ վճարված կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. Չնայած 1 կետի դրույթներին, Պայմանավորվող Պետության սոցիալական ապահովության օրենսդրության համաձայն վճարվող կենսաթոշակները վ այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

## ՀՈԴՎԱԾ 19

## ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.

a) Պայմանավորվող Պետության կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմինների կողմից, կամ պետական հիմնադրամների կողմից ֆիզիկական անձին այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց վճարված՝ կենսաթոշակից տարբերվող վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

b) Սակայն, այդպիսի վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

i) հանդիսանում է այդ Պետության ազգային անձը, կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտը բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

3. 15 (Կախյալ անձնական ծառայություններ) և 16 (Տնօրենների հոնորարներ և ղեկավար պաշտոնյաների վարձատրություններ) Հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող Պետության, կամ նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմինների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վարձատրությունների նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 20

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

1. Ուսանողը կամ ստաժորը, որը հանդիսանում է, կամ մինչև Պայմանավորվող Պետություն անմիջապես ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտը և որը գտնվում է առաջինը հիշատակված Պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, մյուս Պետությունում չի հարկվում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար

ստացված վճարումների համար, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Ուսանողին, աշակերտին կամ ստաժորին, կախված հանգամանքներից, մյուս Պայմանավորվող Պետությունում մատուցված ծառայությունների դիմաց վճարվող վարձատրությունները չեն հարկվում այդ Պետությունում 5 տարի ժամկետի ընթացքում, եթե այդ ծառայությունների մատուցումը կապված է նրանց ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու հետ:

## ՀՈԴՎԱԾ 21

## ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

1. Ֆիզիկական անձը, որը հանդիսանում է, կամ անմիջապես մինչև մյուս Պայմանավորվող Պետություն մեկնելը հանդիսացել է Պայմանավորվող Պետության ռեզիդենտը, և որը որևէ համալսարանի, ինստիտուտի, դպրոցի կամ մյուս Պայմանավորվող Պետության կողմից որպես շահույթի նպատակ չհետապնդող կրթական այլ համանման ինստիտուտ ճանաչված հաստատության հրավերքով ուսուցման կամ հետազոտությունների կամ դրանցից երկուսի նպատակով, այդ մյուս Պետությունում ուսուցման կամ հետազոտությունների կամ դրանցից երկուսի դիմաց ստացած վարձատրությունների համար ազատվում է հարկերից, բայց ոչ ավել, քան 2 տարի ժամկետում:

2. Սույն Հոդվածի 1 կետի դրույթները չեն վերաբերում հետազոտություններից ստացվող եկամուտներին, եթե այդպիսի հետազոտությունները իրականացվում են ոչ թե հասարակական, այլ ցանկացած անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

## ՀՈԴՎԱԾ 22

## ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ Հոդվածներում չքննարկված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1 կետի դրույթները չեն կիրառվում 6 Հոդվածի (Եկամուտ անշարժ գույքից) 2 կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտը, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և գույքը կամ իրավունքը, որի առնչությամբ վճարվել է եկամուտը, իրականում կապված են այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7 Հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14 Հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

3. Անկախ 1 և 2 կետերի դրույթներից, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ Հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող Պետությունում առաջացած եկամտի տարրերը կարող են հարկվել նաև այդ մյուս Պետությունում:

## Գ Լ ՈՒ Խ IV
## ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿՈՒՄԸ

### ՀՈԴՎԱԾ 23

### ԳՈՒՅՔ

1. 6 Հոդվածում (Եկամուտ անշարժ գույքից) նշված անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի, կամ մյուս Պայմանավորվող Պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կայուն բազային վերաբերող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից շահագործվող ծովային կամ գետային նավերով, օդանավերով, կամ երկաթուղային փոխադրամիջոցներով ներկայացված գույքը և այդպիսի ծովային կամ գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

4. Ընկերության բաժնետոմսերով և այլ կորպորատիվ իրավունքներով ներկայացված գույքը, որի ակտիվները գլխավորապես կազմված են Պայմանավորվող Պետությունում գտվող անշարժ գույքից կարող է հարկվել այդ Պետությունում:

5. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

## Գ Լ Ո Ւ Խ V
## ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

### ՀՈԴՎԱԾ 24
### ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Երբ Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է եկամուտներ կամ տնօրինում է գույք, որոնք սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան կարող են հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում, առաջինը հիշատակված Պետությունը թույլատրում է.

i) այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում՝ այդ մյուս Պետությունում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով.

ii) այդ ռեզիդենտի գույքի հարկի նվազեցում՝ այդ մյուս Պետությունում վճարված գույքի հարկին հավասար գումարի չափով:

Սակայն, երկու դեպքում էլ այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտահարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, հանգամանքներից կախված, վերագրվում է եկամտին կամ գույքին, որոնք կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Երբ Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը այդ Պետությունում ազատված են հարկումից, այդպիսի Պետությունը, այնուամենայնիվ, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել ազատված եկամուտը կամ գույքը:

3. Պայմանավորվող Պետությունում եկամուտների կամ գույքի հարկերի նվազեցման նպատակով մյուս Պայմանավորվող Պետությունում վճարված հարկերը համարվում է ներառած նաև այն հարկը, որը ենթակա կլիներ հարկման այդ մյուս Պայմանավորվող Պետությունում, սակայն հարկային խթաններ ստեղծելու նպատակով օրենսդրությամբ նվազեցվել կամ պակասեցվել է այդ Պայմանավորվող Պետության կողմից:

## ԳԼՈՒԽ VI
## ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ՀՈԴՎԱԾ 25
### ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող Պետության ազգային անձինք չեն ենթարկվում մյուս Պայմանավորվող Պետությունում ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան միևնույն հանգամանքների դեպքում հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք: Այս դրույթը, չնայած 1 Հոդվածի (Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան) դրույթներին, կիրառվում է նաև Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող՝ քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող Պետություններից և ոչ մեկում չեն ենթարկվում ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել տվյալ Պետության ազգային անձինք միևնույն հանգամանքների դեպքում:

3. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է լինի նվազ բարենպաստ, քան այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումը: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտներին, հարկման նպատակներով այնպիսի անձնական զեղչերի, նվազեցումների և պակասեցումների թույլատրումը պարտավորեցնող դրույթ, որոնք Պայմանավորվող Պետությանը իր ռեզիդենտներին շնորհել է քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների պատճառով:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9 Հոդվածի (Զուգորդված ձեռնարկություններ) 1 կետի, 11 Հոդվածի (Տոկոսներ) 6 կետի կամ 12 Հոդվածի (Ռոյալթի) 4 կետի դրույթները, մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարած տոկոսները, ռոյալթին և այլ վարձատրությունները, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես մի Պայմանավորվող Պետության ձեռնարկության ցանկացած պարտքը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկվող կապիտալի որոշման նպատակով ենթակա կլինեն նվազեցման նույն պայմաններով, ինչպես որ առաջին հիշատակված Պետության ռեզիդենտին պարտք լինելիս:

5. Մի Պայմանավորվող Պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ կառավարվում է մյուս Պայմանավորվող Պետության մեկ կամ

քանի ռեզիդենտների կողմից, չեն ենթարկվի առաջին հիշատակված Պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթակվել առաջին հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկությունները:

6. Չնայած 2 Հոդվածի (Հարկեր, որոնց վրա տարածվում է Կոնվենցիան) դրույթներին, սույն Հոդվածի դրույթները կիրառվում են բոլոր տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ:

## ՀՈԴՎԱԾ 26

## ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկմանը, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 25 Հոդվածի (Անխտրականություն) 1 կետին, այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե դիմում-բողոքը համարվում է արդարացի և եթե ինքը ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, իրավասու մարմինը ձգտում է գործը վճռել մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած ձեռքբերված համաձայնություն իրականացվում է անկախ Պայմանավորվող Պետությունների ներքին օրենսդրություններում առկա որևէ ժամանակային սահմանափակման:

3.Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած ձգտում են լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով: Իրավասու մարմինները խորհրդակցությունների միջոցով կմշակեն համապատասխան երկկողմանի արարողակարգեր, պայմաններ, մեթոդներ և ձևեր՝ սույն Կոնվենցիայով նախատեսված փոխհամաձայնեցման արարողակարգի իրականացման համար:

## ՀՈԴՎԱԾ 27

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ կլինեն սույն Կոնվենցիայի կամ Կոնվենցիայում ընգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող Պետությունների ներքին օրենսդրության դրույթների կիրառման համար՝ այնքանով, որքանով դրանցից առաջացող հարկումը չի հակասում սույն Կոմնվենցիային, մասնավորապես, այդպիսի հարկերից խուսափելը բացառելու կամ խարդախությունը կանխելու համար: Տեղեկատվությունների փոխանակումը 1 Հոդվածով (Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան) չի սահմանափակվում: Մի Պայմանավորվող Պետության կողմից ստացած ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի, ինչպես այդ Պետության ներքին օրենսդրության սահմաններում ստացված տեղեկատվությունը, և հայտնվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են Կոնվենցիայով ընդգրկված հարկերի գնահատմամբ կամ գանձմամբ, հարկերի առնչությամբ հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ, կամ հարկերի վերաբերյալ բողոքարկումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկություններն օգտագործում են միմիայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունները բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ: Իրավասու մարմինները խորհրդակցությունների միջոցով կմշակեն համապատասխան պայմաններ, մեթոդներ և ձևեր այն հարցերի շուրջ, որոնց համար այդպիսի տեղեկատվության փոխանակումն իրականացվում է, ներառյալ, եթե անհրաժեշտ է, տեղեկատվության փոխանակումը հարկումից խուսափելու վերաբերյալ:

2. Առաջին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես մի Պայմանավորվող Պետությանը պարտավորեցնող.

a) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենսդրությանը և վարչական գործավարությանը հակասող վարչական գործավարության միջոցառումներ,

b) ներկայացնելու տեղեկատվություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենսդրությամբ կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

c) ներկայացնելու տեղեկատվություն, որը բացահայտում է որևէ առևտրական, աշխատանքային, արդյունաբերական, ձեռնարկատիրական կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ տեղեկատվություն, որի բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

## ՀՈԴՎԱԾ 28

## ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳԱՆՁՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները ուղղակի համաձայնության կգան սույն Կոնվենցիայով ընդգրկված հարկերի, ներառյալ տոկոսների, վճարների ուշացման համար տույժերի և տուգանքների գանձման համար փոխադարձ աջակցություն ապահովելու նպատակով, բացառությամբ դատարանների կամ տրիբունալների վարույթում գտնվող քրեական գործերի:

2. Սույն Հոդվածի 1 կետում նշված պայմանավորվածությունը հիմնվում է Պայմանավորվող Պետությունների վարչական գործավարության և ներքին օրենսդրության վրա՝ սույն Կոնվենցիայի 27 Հոդվածի (Տեղեկատվությունների փոխանակում) համաձայն:

## ՀՈԴՎԱԾ 29

## ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնություններին:

## ԳԼՈՒԽ VII

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## ՀՈԴՎԱԾ 30

## ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Պետություն կծանուցի մյուս Պայմանավորվող Պետությանը սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար իր օրենքների համաձայն անհրաժեշտ արարողակարգի ավարտի մասին: Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի ծանուցումներից վերջինի ստանալու օրվան հաջորդող 30-րդ օրը:

2. Կոնվենցիայի դրույթները կիրառվում են.

a) աղբյուրի մոտ գանձվող եկամուտների հարկերի առնչությամբ՝ Կոնվեցիայի ուժի մեջ մտնելու օրացուցային տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո հարկման ենթակա եկամուտների նկատմամբ,

b) եկամուտների և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրացուցային տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո գանձման ենթակա հարկերի նկատմամբ,

## ՀՈԴՎԱԾ 31

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմնա մինչև չդադարեցվի Պայմանավորվող Պետության կողմից: Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց 5 տարի հետո ցանկացած ժամանակ կարող է դադարեցնել Կոնվենցիան՝ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին գրավոր ծանուցում ուղարկելով ոչ ուշ, քան առնվազն օրացուցային տարվա ավարտից վեց ամիս առաջ: Այդ դեպքում Կոնվենցիան կդադարեցնի իր գործողությունը.

a) աղբյուրի մոտ գանձվող եկամուտների հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո հարկման ենթակա եկամուտների նկատմամբ,

b) եկամուտների և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո գանձման ենթակա հարկերի նկատմամբ,

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ ներքոստորագրողները՝ լինելով լիազորված համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է ք. Վարշավայում, 1999 թվականի հուլիսի 14 -ին, երկու բնօրինակով՝ լեհերեն, հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

| | |
|---|---|
| ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ |